ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԷԼԱԱՄՈՂԱ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/398 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի տեխնիկական աշխատողների համար անհրաժեշտ է ձեռք բերել ձմեռային համազգեստի լրակազմ: Ձմեռային համազգեստի մեկ լրակազմը պետք է բաղկացած լինի՝ 1. հանովի գլխանոցով ձմեռային բաճկոնից, 2. ձմեռային տաբատից, 3. աշխատանքային պաշտպանիչ կոշիկից, 4. հյուսած ձմեռային գլխարկից: 1. Ձմեռային բաճկոն և տաբատ 1.1. Ձմեռային բաճկոնը և տաբատը պետք է պատրաստված լինեն պոլիեսթերաբամբակային գործվածքից /կտորից/, որը պետք է ունենա՝ յուղաջրակայունության (MBO) հատկություն և 50 % կոնցենտրատով թթվային հիմքից պաշտպանիչ հատկություն (K50): Գործվածքի / կտորի/ բաղադրությունը՝ 35 % բամբակ, 65 % պոլիեսթեր մակերեսային խտությունը՝ 245 ± 5 գ/մ²: Գործվածքի /կտորի/ պատռման բեռնվածությունը պետք է կազմի՝ • ըստ հիմքի՝ ոչ պակաս, քան 1100 Ն, • ըստ միջնաթելի՝ ոչ պակաս, քան 800 Ն: Գործվածքի /կտորի/ յուղակայունության/ յուղանդրադարձման ցուցանիշը նախնական տեսքում՝ սկզբնական վիճակում պետք է կազմի առնվազն 5 բալ, իսկ 5 անգամ լվանալուց հետո ցուցանիշը չպետք է փոփոխվի: Գործվածքի /կտորի/ թթվակայունության ցուցանիշը սկզբնական վիճակում պետք է կազմի առնվազն 6 ժամ, իսկ 5 անգամ լվանալուց հետո ցուցանիշը չպետք է փոփոխվի: Թաց մշակումից հետո հագուստի գծային չափերի փոփոխությունը չպետք է գերազանցի՝ • ըստ հիմքի՝ -2 %, • ըստ միջնաթելի՝ -1,5 %: 1.2. Գունային համադրություն Հագուստի գունային համադրությունը պետք է լինի՝ • մուգ կապույտ՝ գույնի կոդը 19-3920 TCX, • ֆլյուրեսցենտ լիմոնադեղին՝ գույնի կոդը 13-0630 TN: 1.3. Ձմեռային բաճկոնի կառուցվածքը Բաճկոնը պետք է ունենա ուղիղ ուրվագծով ձևվածք և ներքևի հատվածում՝ գոտի՝ ռեզինե մանժետով: Բաճկոնի

երկարությունը պետք է լինի գոտկատեղից 15-20 սմ ներքև։ Բաճկոնը պետք է ունենա կանգուն օձիք։ Օձիքի վրա պետք է նախատեսված լինի կտորե կախիչ և սպիտակ գույնի պիտակ՝ ապրանքի չափսի նշումով։ Բաճկոնի առաջամասում և ետնամասում որպես ջերմամեկուսիչ ներդիր պետք է օգտագործվի 300 գ/մ² խտությամբ սինթեպոն, որը պետք է մգդակված լինի սև գույնի մետաքսյա աստառի հետ՝ շեղանկյուն, փախլավանման հյուսվածքով։ Թևերի հատվածում պետք է օգտագործվի 200 գ/մ² խտությամբ սինթեպոն, որը նույնպես պետք է մգդակված լինի սև գույնի մետաքսանման աստառի հետ՝ շեղանկյուն, փախլավանման նախշով։ Մետաքսյա աստառի մակերեսային խտությունը պետք է լինի 60 ± 5 գ/մ²-ից ոչ պակաս։ Սինթեպոնի և մետաքսյա աստառի միջև պետք է նախատեսված լինի լրացուցիչ գործվածքային շերտ՝ կտորեղեն սինթեպոնի թափանցումը բացառելու նպատակով։ Թևքերը պետք է լինեն ներկարված և դաստակի հատվածում ավարտվեն 5 սմ լայնությամբ ռեզինե մանժետով։ Բաճկոնը պետք է փակվի քամուց պաշտպանող կափույրի տակ տեղադրված նեյլոնե շղթայով (կայծակաճարմանդով)։ Քամուց պաշտպանող կափույրը պետք է ամրացվի առաջամասին նիկելապատ 4-5 զույգ կոճգամներով։ 1.4. Բաճկոնի գրպանները Բաճկոնի ներքևի կողային հատվածում պետք է նախատեսված լինի 2 ներքին գրպան։ Գրպանների մուտքերը պետք է մշակված լինեն ֆլյուրեսցենտ լիմոնադեղին գույնի նեղ երիզներով, որոնց մեջտողում պետք է տեղադրված լինի նեյլոնե շղթա։ Բաճկոնը պետք է ունենա կրծքամասի հատվածում 1-2 վրադիր ծավալային գրպան։ Կրծքամասի գրպանները պետք է փակվեն կափույրներով։ Կափույրները պետք է պատրաստված լինեն երկու գույնի գործվածքից՝ • վերին հատվածը՝ մուգ կապույտ, • ներքին հատվածը՝ ֆլյուրեսցենտ լիմոնադեղին, վերին հատվածից 1-2 մմ ավելի լայն։ Կափույրը պետք է մշակված լինի մի կողմից ուղիղ, իսկ մյուս կողմից՝ շեղանձև։ Բաճկոնի կրծքավանդակի հատվածում տեղադրված վրադիր գրպանները մշակվում են զույգ կարերով։ Գրպանների ծածկող կափույրների վրա տեղադրված են փոկեր՝ գրպանները բացելիս դրանց աղտոտումը կանխելու նպատակով։ Կրծքային գրպանները փակվում են կպչունային փականներով։ Բաճկոնի կրծքավանդակի ամբողջ շրջագծով և թևերի վրա տեղադրվում են 4 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ։ Մեջքի հատվածում, ինչպես նաև թևերի ամբողջ շրջագծով, լուսանդրադարձնող ժապավենները տեղադրվում են կրկնակի շարքով։ 1.5. Լուսանդրադարձնող ժապավեններ Բաճկոնի կրծքավանդակի ողջ շրջագծով և թևերի հատվածներում պետք է տեղադրվեն 4 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ։ Մեջքի հատվածում, ինչպես նաև թևերի ողջ շրջագծով լուսանդրադարձնող ժապավենները պետք է տեղադրվեն կրկնակի։ Լուսանդրադարձնող ժապավենների հիմքի նյութի բաղադրությունը պետք է լինի՝ 30% բամբակ և 70% պոլիեսթեր։ Լուսանդրադարձնող ժապավենների լուսանդրադարձման գործակիցը 60 °C ջերմաստիճանում 40 լվացման ցիկլից հետո պետք է լինի առնվազն 470 կդ/(լք·մ²)։ 1.6. Բաճկոնի կարեր և տարբերանշաններ Բաճկոնի բոլոր զարդակարերը պետք է կատարվեն զույգ կարով՝ զույգ կարի մեքենայի միջոցով։ Բաճկոնի մեջքի հատվածում

ասեղնագործության եղանակով պատկերվում է «ՇԵՆԳԱՎԻԹ» անվանումը, իսկ կրծքավանդակի ձախակողմյան գրպանի վրա՝ վրադիր կտորի վրա, ասեղնագործվում է քաղաքապետարանի տարբերանշանը՝ պահպանելով պատկերի համաչափությունը։ Մեջքի հատվածի ասեղնագործության և կրծքավանդակի տարբերանշանի չափսերը լրացուցիչ համաձայնեցվում են Գնորդի հետ։ 1.7. Հանովի գլխանոց Գլխանոցը բաղկացած է երեք հատվածից, որոնցից միջտեղի հատվածը պետք է լինի լյումինեսցենտ լիմոնադեղին, իսկ երկու կողային հատվածները՝ մուգ կապույտ գույնի։ Գլխանոցը բաճկոնից անջատվում է շղթայի միջոցով, իսկ կոչկումն իրականացվում է միմյանց նկատմամբ խաչաձև կարված՝ 7 սմ երկարությամբ երկու զույգ կպչունային ժապավենների միջոցով։ 1.8. Մակնշում Բաճկոնի ներսի կողմում՝ ներքևի եզրից 15 սմ բարձրության վրա, կարվում է սպիտակ նեյլոնե տեղեկատվական պիտակ, որի վրա նշվում են արտադրողի տվյալները և վավերապայմանները, հագուստի չափսը, հագուստի համառոտ նկարագիրը, ինչպես նաև խնամքի վերաբերյալ հրահանգները։ 2. Ձմեռային տաբատ Տաբատը պետք է ունենա ուղիղ ձևվածք։ Տաբատի ներսի կողմում, որպես տաքացնող ներդիր, տեղադրվում է 100–150 գ/մ² մակերեսային խտությամբ սինթեպոն, որը միացվում է սև գույնի մետաքսյա աստառին ուլտրաձայնային անկար եղանակով։ Մետաքսյա աստառի մակերեսային խտությունը պետք է կազմի 60±5 գ/մ²։ Սինթեպոնի և մետաքսյա աստառի միջև լրացուցիչ տեղադրվում է ոչ գործվածքային նյութի շերտ՝ սինթեպոնի ներթափանցումը կանխելու նպատակով։ Տաբատն առջևի հատվածում ունի 2 կողային ներքին գրպան և 1 – 2 վրադիր ծավալային գրպաններ ծնկամասերի հատվածում։ Կողային ներքին գրպանների մուտքերն ունեն թեք ձևվածք և մշակվում են ֆլյուրոսցենտ լիմոնադեղին գույնի նեղ երիզներով։ Վրադիր գրպանները փակվում են կափույրներով։ Կափույրները պատրաստվում են 2 կտորից. վերին հատվածը՝ մուգ կապույտ գույնի, իսկ ստորին հատվածը՝ ֆլյուրոսցենտ լիմոնադեղին գույնի,վերին հատվածից 1–2 մմ լայն։ Վրադիր գրպանները մշակվում են զույգ կարերով։ Ծածկող կափույրների վրա տեղադրված են փոկեր, որոնք բացելիս պաշտպանում են գրպանները կեղտոտվելուց։ Գրպանները փակվում են կպչունային փականներով։ Գրպանները պետք է փակվեն կպչունային փականներով (Velcro)։ Տաբատի գոտին պետք է լինի 4 սմ լայնությամբ և ունենա 5 կամրջակ՝ գոտի ամրացնելու համար։ Տաբատի առաջամասը պետք է փակվի նեյլոնե շղթայով (կայծակաճարմանդով) և կոճակով։ Տաբատի գոտու մեջ պետք է տեղադրված լինի 3,5-4 սմ լայնությամբ էլաստիկ ժապավեն՝ տաբատի չափսը կարգավորելու համար։ Տաբատի ծնկամասերից ներքև պետք է տեղադրվեն 4 սմ լայնությամբ կրկնակի լուսանդրադարձնող ժապավեններ։ Լուսանդրադարձնող ժապավենների հիմքի բաղադրությունը պետք է լինի 30 % բամբակ և 70 % պոլիեսթեր։ Լուսանդրադարձնող ժապավենների լուսանդրադարձման գործակիցը 60 °C ջերմաստիճանում 40 լվացման ցիկլից հետո չպետք է լինի 470 կդ/(լք·մ²)-ից պակաս։ Ձմեռային համազգեստի յուրաքանչյուր լրակազմ պետք է փաթեթավորված լինի առանձին թափանցիկ պոլիէթիլենային տոպրակում։ Մեկ տոպրակը պետք է պարունակի 1

լրակազմ։ Յուրաքանչյուր տոպրակ պետք է ունենա համապատասխան պիտակ, որի վրա նշվում են՝ • ապրանքի անվանումը, • լրակազմի քանակը, • չափսը։ 3. Աշխատանքային պաշտպանիչ կոշիկ Աշխատանքային պաշտպանիչ կոշիկը նախատեսված է աշխատակիցների անվտանգության ապահովման համար և պետք է համապատասխանի EN 20345 ստանդարտի պահանջներին՝ S3 պաշտպանվածության դասով։ Կոշիկը պետք է բաղկացած լինի՝ • առաջամասից, • ճտքի ստորին հատվածից, • ճտքի վերին հատվածից, • լեզվակից, • տակացուից Կոշիկի առաջամասը, ճտքի ստորին հատվածները և լեզվակը պետք է պատրաստված լինեն 1,9-2,1 մմ հաստությամբ սև բնական նակատե կաշվից։ Ճտքի վերին հատվածը պետք է պատրաստված լինի բաց մոխրագույն բնական կաշվից և բաղկացած լինի երկու հատվածից՝ • վերին հատվածի բարձրությունը՝ 3 սմ, • ստորին՝ U-աձև հատվածի կենտրոնական մասի բարձրությունը՝ 6,5 սմ։ Բաց մոխրագույն կաշվե հատվածի ներսի կողմում պետք է տեղադրված լինի սպունգային ներդիր։ Կոշիկի լեզվակը կողային հատվածներում պետք է մշակված լինի լրացուցիչ կափույրներով՝ նախատեսվածկեղտի և խոնավության ներթափանցումը կանխելու համար։ Կոշիկի ընդհանուր բարձրությունը պետք է կազմի 15 սմ, իսկ ճտքի բարձրությունը՝ ետնամասի հատվածում՝ 10,5 սմ։ Ճտքերի վրա պետք է առկա լինի 5 շարք մետաղական արագակապ կեռիկ, իսկ կապումը պետք է իրականացվի երկնագույն կոշկաքուղերով։ Կոշիկի տակացուն պետք է պատրաստված լինի երկշերտ պոլիուրեթանից (PU)։ Տակացուի վերին շերտը պետք է լինի մոխրագույն, իսկ ստորին շերտը՝ սև։ Կոշիկի տակացուի միացման եղանակը պետք է լինի պոլիուրեթանի ուղղակի ներարկումը (PU Injection Method), որի միջոցով տակացուն և կոշիկի նախապատրաստվածքը միաձուլվում են՝ կազմելով մեկ ամբողջական կառուցվածք։ Կոշիկը պետք է ունենա մետաղական պաշտպանիչ քթամաս՝ ոտքի մատները մինչև 200 Ջ հարվածային էներգիայով հարվածներից պաշտպանելու համար, ինչպես նաև մետաղական ճկուն հակածակման ներդիր՝ ոտնաթաթը սուր և ծակող առարկաներից պաշտպանելու նպատակով։ Կոշիկի ներքին հատվածը պետք է պատված լինի նարնջագույն ծակոտկեն գործվածքով։ Կոշիկները պետք է արտադրված լինեն 2025 թվականից ոչ շուտ։ Արտադրության տարեթվի վերաբերյալ համապատասխան մակնշումը պետք է առկա լինի կոշիկի լեզվակի ներքին կողմում։ Կոշիկի լեզվակի արտաքին հատվածին պետք է կարված լինի սև արհեստական թավշյա գործվածք, որի վրա պետք է տպված լինի «ՇԵՆԳԱՎԻԹ» անվանումը։ 4. Հյուսած ձմեռային գլխարկ Հյուսած ձմեռային գլխարկը նախատեսված է աշխատակցի գլուխը ցրտից պաշտպանելու համար։ Գլխարկի գործվածքի բաղադրությունը պետք է լինի՝ 100 % ակրիլ, գույնը՝ սև։ Գլխարկի չափսի կարգավորումը պետք է իրականացվի ծալքավոր շերտի միջոցով։ Գլխարկի առաջնամասում՝ ծալքավոր հատվածի կենտրոնական մասում, արհեստական թավշյա կտորի վրա պետք է ասեղնագործված լինի «ՇԵՆԳԱՎԻԹ» անվանումը։ 5. Նմուշի ներկայացում և համաձայնեցում Մատակարարը, մինչև մատակարարումն իրականացնելը, Գնորդի համաձայնեցմանը պետք է ներկայացնի ձմեռային համազգեստի մեկ

ПОЛНОЕ ОПИСАНИЕ
предлагаемого товара

ЭЛААМОДА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱ-ԷԱՃԱ ՊԱԲ-26/398 ниже представляет полное описание предлагаемого им товара:

Номер лота	Предлагаемый товар Технические характеристики
1	лրակազմի նմուշ, ներառյալ՝ բաճկոնը, տաբատը, աշխատանքային պաշտպանիչ կոշիկը և հյուսած ձմեռային գլխարկը։ Ներկայացված նմուշը պետք է հնարավորություն տա գնահատելու ապրանքի արտաքին տեսքը, ձևվածքը, գունային համադրությունը, օգտագործված նյութերը, կարերի որակը, մակնշումը, տարբերանշանները և սույն տեխնիկական բնութագրով սահմանված մյուս պահանջներին համապատասխանությունը։ Նմուշը Գնորդի կողմից հաստատվելուց հետո համարվում է պայմանագրով նախատեսված ընդհանուր քանակի մաս և ենթակա է Գնորդին մատակարարման՝ վերջին խմբաքանակի մատակարարման ժամանակ։ Մատակարարվող ապրանքների արտաքին տեսքը, նյութերը, գունային համադրությունը, կառուցվածքը և տեխնիկական բնութագրերը պետք է համապատասխանեն Գնորդի կողմից հաստատված նմուշին։ 6. Որակի և համապատասխանության վերաբերյալ պահանջներ Մատակարարվող բոլոր ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված։ Յուրաքանչյուր մատակարարվող խմբաքանակ պետք է համապատասխանի սույն տեխնիկական բնութագրով սահմանված բոլոր պահանջներին։ Անհրաժեշտության դեպքում Գնորդի պահանջով Մատակարարը պարտավոր է իր միջոցների հաշվին ներկայացնել մատակարարվող ապրանքների՝ սույն տեխնիկական բնութագրին համապատասխանությունը հավաստող լաբորատոր փորձաքննության եզրակացություն/փորձարկման արձանագրություն՝ ՀՀ-ում և/կամ արտերկրում հավատարմագրված համապատասխան կազմակերպությունից։ Փորձաքննության եզրակացությունը պետք է վերաբերի տվյալ ապրանքատեսակի համապատասխան տեխնիկական ցուցանիշներին և հնարավորություն տա նույնականացնելու փորձարկված արտադրանքը, դրա արտադրողին և, անհրաժեշտության դեպքում, համապատասխան խմբաքանակը։ Մատակարարը պատասխանատու է մատակարարվող ապրանքների՝ սույն տեխնիկական բնութագրին և Գնորդի կողմից հաստատված նմուշին համապատասխանության համար։